

ՈՒՆԻԹՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԺԳ.-ԺԵ. ԴԴ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՎԼԱԴԻՄԻՐ ԻՒԱՆՈՎ
khoy_ivanov@rambler.ru

ԺԵ. դարի սկզբին դիւանագիտական առաքելութեամբ Լենկթեմուրի մօտ՝ Սամարղանդ, ճամրորդող Կաստիլիայի թագաւոր Հենրիխ Գ-ի դեսպան Կլաւիսօն, անցնելով Հայաստանի հարաւ-արեւմտեան շրջաններով եւ հասնելով Մակու՝ զարմանքով արձանագրում է այնտեղ կաթոլիկ հայերի բնակութեան փաստը. «Կիրակի, Յունիսի 1ին (1404), մենք հասանք մի բերդ, որ կոչում էր Մակու, եւ այս վայրը պատկանում էր մի իշխանի, որ հռոմէական կաթոլիկ քրիստոնեայ էր, բայց նրա անունը Նուր-ադ-Դին էր, եւ այն զինուորները, որոնք պահպանում էին այս բերդը, նոյնպէս պատկանում էին հռոմէական կաթոլիկ հաւատքին: Նրանք յիրաւի ազգութեամբ հայ էին, խօսում էին հայերէն...»¹: Մինչդեռ, կաթոլիկների առկայութիւնը նշուած վայրում զարմանալի չէր, քանզի այդ տարածաշրջանում, ԺԳ. դարի սկզբին ծաւալուել էր կաթոլիկ միսիոնէրների ակտիւ գործունէութիւնը: Ընդհանուր առմամբ, դաւանափոխութեան փաստը եղել էր այն ծանր հասարակական-քաղաքական իրավիճակի հետեւանքը, որն ստեղծուել էր ԺԳ.-ԺԵ. դարերում ինչպէս Պատմական Հայաստանի տարածքում, այնպէս էլ Կիլիկիայում: Արդարեւ, պետականութեան կորուստը, կամ նրա թուլացումը գրեթէ միշտ ուղեկցում են հասարակական-քաղաքական, տնտեսական եւ այլ ցնցումներով, որոնք իրենց հերթին, յանգեցնում են հոգեւոր դաշտի խոցելիութեանը եւ ուղղակիօրէն առաջացնում ազգի հոգեւոր անվտանգութեան բարդ խնդիրներ:

Այս յօդուածում փորձ է արուելու, ելնելով նշուած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական համատեքստից՝ դիտարկել ունիթորական (միարարական) շարժման յառաջացումը, նաեւ անդրադառնալ այդ երեւոյթի հետ կապուած որոշ խնդիրներ:

Ջաքարեանների կողմից հայկական հոգերի միաւորումը եւ քայքայուած տնտեսութեան վերականգնման գործընթացը ընդհատուեցին ԺԳ. դարից սկսուած մոնղոլական եւ այլ նուաճողական արշաւանքներով: Կոտրելով հայ-վրացական ուժերի դիմագրութիւնը, մոնղոլները 1220-

1243ի ընթացքում գրաւեցին Ջաքարեաններին պատկանող բոլոր տիրոյթները, որոնք ի սկզբանէ մտան կուսակալութեան, իսկ յետագայում՝ նոր աշխարհակալ տէրութեան իշխանութեան կազմի մէջ: Ժամանակակից աղբիւրները յստակ նշում են նուաճուող ժողովուրդների հանդէպ մոնղոլական զօրքերի կատարած վայրագութիւնների մասին: Այսպէս, ԺԳ. դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Լցաւ երկիրն ամենայն դիակամքք մեռելոց, եւ ոչ ոք էր, որ թաղէր զնոսա... իբրեւ խաւարամածեալ էր ամենայն աշխարհ, եւ սիրէին մարդիկ զգիշեր առաւել քան զտիւ. երկիր թափուր մնաց ի բնակչաց իւրոց...»²: Իսկ նոյն դարի փիլիսոփայ Յովհաննէս Երզնկացի Պլուզը այս կապակցութեամբ նշում է. «եւ մատնեցաք մեք աւար ազգաց սպանողաց, գերողաց եւ դառն զրկողաց»³:

Մոնղոլական տիրապետութեան հաստատումը Հայաստանում յանգեցրեց նաեւ որոշակի տեղաշարժերի՝ հայ-վրացական թագաւորութեան ներքաղաքական դաշտում: ԺԳ. դարի 50ականներին Ջաքարեաններին ստորադաս մի շարք իշխողներ իրենց տիրոյթներով անցան մոնղոլ Մեծ Խան Մանգուի (1251-1259) անմիջական ենթակայութեան: Դրանցից էին՝ Սմբատ Օրբէլեանը, Սադուն Արծրունին, Հասան Ջալալը⁴:

Ինչ վերաբերում է հասարակական-տնտեսական իրավիճակին, ապա արտագաղթի, զանգուածային կոտորածների, ծանր հարկերի հետեւանքով, այն բաւականին բարդ էր եւ զնալով աւելի վատթարացաւ: Դատարկւում էին քաղաքները եւ երկրի շուկաները, համընդհանուր անկում էին ապրում հողագործութիւնը եւ արհեստները: Մոնղոլները, լինելով քոչուորներ, հարաւ-արեւմտեան Հայաստանի արգաւանդ դաշտերն արօտավայրերի վերածեցին եւ չէին խրախուսում հողագործութիւնը: Գանձուող հարկերի յստակ չափի բացակայութիւնը (մինչեւ Ղազան-խանի 1390ականների բարենորոգումները) լայն հնարաւորութիւններ էր ընձեռնում բասղաղների⁵ եւ կապալառուների կամայականութիւնների համար, որոնց քիչ էր հետաքրքրում հիմնական արտադրողի՝ գիւղացու կացութիւնը: Դրութիւնը համեմատաբար տանելի է եղել միայն այն շրջաններում, որոնց տէրերը կարողացել էին ձեռք բերել «ինջու» իրաւունքը: Տիրոյթ-«ինջու»ն հանդիսանում էր խանի կալուած, բայց ենթարկւում էր տեղացի իշխողներին, որոնք օժտուած էին մի շարք արտօնութիւններով: Ըստ դրանցից մէկի՝ իշխանն ինքն էր զանձում հարկերը, այլ ոչ թէ կապալառուները որով՝ շահոյթի մեծ մասը մնում էր երկրում, իսկ բնակչութիւնը զերծ էր մնում տարբեր տեսակի կամայականութիւններից: Այդ էր պատճառներից մէկը, որ Հայաստա-

նի իշխողները, շահագրգիռ լինելով իրենց ենթակայ արտադրողի կայունութեամբ (որի սնանկացումը կը քանդէր իրենց տնտեսական հօրութեան հիմքը) ամէն կերպ ձգտում էին ձեռք բերել «խնջու»-ի իրաւունք: Ծնորհիւ Սմբատ Օրբէլեանի⁶ գործունէութեան, նման իրաւունք տրուեց նաեւ Սիւնիքին: Դրանով է բացատրւում այդ նահանգի որոշակի տնտեսական աճը, որն իր հերթին (չնայած Խաղբակեան-Պռօշեանների եւ Օրբէլեանների միջեւ մրցակցութեան) ստեղծեց բարենպաստ պայմաններ Գլաձորի (1280) եւ յետագայում՝ Տաթեւի (1345) համալսարանների հիմնադրման համար:

Իլխանութեան դրութիւնը երբեք աչքի չէր ընկնում առանձնակի կայունութեամբ, ինչպէս արտաքին պատերազմների, այնպէս էլ ներքին զգտութիւնների եւ տնտեսական խորացող անկման պատճառով: Ոչ մի տեսակի բարենորոգումներն ի վիճակի չէին լինի փրկել Իլխանութեան իրավիճակը, հաշուի առնելով վերոյիշեալ գործօնները: Եւ եթէ Ջաղաթեանների եւ Ոսկէ Հորդայի դէմ Իլխանութեան պայքարը⁷ ընթանում էր փոփոխակի յաջողութիւններով (հայ իլխանների ռազմական ուժերի ակտիւ ներգրաւմամբ), ապա Եգիպտոսի դէմ գրեթէ բոլոր արշաւանքները անյաջողութեան էին մատնւում: Ի վերջոյ, այդ ամէնը բերեց Իլխանութեան կործանմանը: Իլխան Արու-Սաիդի մահից (1344) յետոյ, Իլխանութեան գոյութիւնը փաստացի դադարեց, իսկ նրա փոխարէն ասպարէզ եկած Չօրանեանների եւ Ջելաիրեանների պետութիւններն անմիջապէս սկսեցին պատերազմել միմեանց դէմ: Քաղաքական իրադրութիւնը չբարելաւուեց նաեւ յետագայում: Ջելաիրեանները յաղթելով Չօրանեաններին՝ 1386ին ենթարկուեցին Ոսկէ Հորդայի խան Թոխթամիշի յարձակմանը, որին յաջորդեցին Լենկթեմուրի արշաւանքները:

Եւ այսպէս, Պատմական Հայաստանի տարածքը, մոնղոլական տիրապետութեան ժամանակներում եւս վերածուեց տարբեր նուաճողների միջեւ անդադար պատերազմական գործողութիւնների թատերաբեմի: Սովորական երեւոյթ էին դարձել համընդհանուր տնտեսական անկումը, կոտորածները, արտագաղթը, համաճարակը եւ սովը: Պատմիչ Թովմա Մեծոփեցին (1378-1446), բնութագրելով Լենկթեմուրի 1388ին հեռանալուց յետոյ ստեղծուած դրութիւնը՝ հետեւեալն է գրում. «Եւ յետ գնալոյ նորայ ի յաշխարհէս մեր, մորեխ եկն եւ եկեր զամենայն արտորայս եւ զխոտ երկրին, եւ սով սաստիկ տարածեցաւ յամենայն տեղիս ի գեղ, ի քաղաք, ի ասան բովանդան միահեծան, զի կերան զշունս եւ զկատուս... սպանանէին զմիմեանս եւ ուտէին եւ ոչ հազէին, եւ յետոյ ինքեանք մեռանէին»⁸: Լենկթեմուրի մահից յետոյ, Հայաստանն ընկաւ

Աղ-Ղոյունլու, իսկ յետագայում՝ Ղարա-Ղոյունլու ցեղերի տիրապետութեան տակ:

Ինչպիսի՞ն էր իրավիճակը Կիլիկիայում: 1243ին, մոնղոլական ալիքը Կիլիկիայի սահմաններին հասնելուց յետոյ, Հեթում Ա-ին յաջողուեց փրկել իր թագաւորութիւնը աւերածութիւններից՝ նրանց հետ ռազմական դաշինք կնքելով: Տուեալ պատմական պահին այդ դաշինքը քաղաքականապէս արդարացուած էր, սակայն յետագայում՝ Հուլաւեանների թուլացման եւ Եգիպտոսի Սուլթանութեան զօրացման հետեւանքով, գնալով դառնում էր աւելի ու աւելի պատրանքային: Այս պարագայում, Կիլիկիայի վերնախաւի մի մասը շարունակում էր կողմնորոշուել դէպի Եւրոպա, ինչը Եգիպտոսի կողմից դիտւում էր որպէս խաչակրաց արշաւանքների վերսկսման փորձ եւ յաճախ օգտագործւում էր նրա կողմից որպէս յարմար պատրուակ հերթական յարձակման համար: Եգիպտոսի թշնամական վերաբերմունքը պայմանաւորուած էր նաեւ միջազգային տարանցիկ առեւտրում Այասի եւ Աղեքսանդրիայի միջեւ մրցակցութեամբ⁹:

ԺԴ. դարի սկզբին Կիլիկիայի աշխարհաքաղաքական վիճակը բաւականին բարդ էր: Այդ մասին պերճախօս է ժամանակակից Մարիօ Սանուտոյի¹⁰ վկայութիւնը. «Մի կողմից՝ ներսում, կայ մի առիւծ, այսինքն՝ մոնղոլները, որոնց հայ արքան մեծ հարկ է մուծում: Միւս կողմից՝ ընծառիւծն է՝ այսինքն սուլթանը, որն ամէն օր ասպատակում է նրա սահմանները: Երրորդ կողմից՝ գայլն է, այսինքն՝ թուրքերը, որոնք քայքայում են նրա տարածքը: Եւ վերջապէս, չորրորդ կողմից՝ օձն է այսինքն՝ ծովահէնները, որոնք չարչարում են Հայաստանի (Կիլիկիայի - Վ.Ի.) քրիստոնեաներին»¹¹:

Այդ ֆոնի վրայ, Կիլիկիայում ծաւալուեցին պապականութեան կողմից դրդուած աստուածաբանական բուռն վէճեր՝ միարարութեան կողմնակիցների եւ նրանց հակառակորդների միջեւ: Այս վէճերը շարունակուեցին ընդհուպ մինչեւ թագաւորութեան կործանումը 1375ին: Վէճերը հարուածում էին ազգի հոգեւոր միութեանը եւ նուազեցնում թագաւորութեան պաշտպանունակութիւնը: Պապականութիւնը դաւանափոխութեան դէպքում խոստանում էր ցուցաբերել ռազմա-նիւթական օգնութիւն, իսկ իրականում, հետապնդում էր քաղաքական նպատակներ, այն է՝ հաստատել իր իշխանութիւնը: Եւ այսպէս, պապականութեան յառաջխաղացումը (կազմակերպչական իմաստով) ի սկզբանէ սկսուեց Կիլիկիայի ուղղութեամբ, եւ միայն յետագայում՝ դէպի Պատմական Հայաստան, չնայած պապականութեան կողմից միարարութեան

մասին կոչերի փաստեր արձանագրուած էին այնտեղ՝ մինչեւ Բարթոլոմէոս Բոլոնիացին, որի անունը կապուած է ունիթորական շարժման ընդլայնման եւ ծաւալած հսկայ քարոզչա-թարգմանչական գործունէութեան հետ¹²։

Բանասէր Լեւոն Խաչերեանը, խօսելով պապականութեան կողմից առաջնային ուղղութեան՝ Կիլիկիայի, ընտրութեան մասին, նշում է. «Պապականութեան նկրտումները հայ ժողովրդի նկատմամբ նոր քափ ստացան եւ ուժեղացան Ռուբինեան իշխանութեան հենց հաստատման հետ միաժամանակ։ Կիլիկիայի աշխարհագրական դիրքը Արեւելք քափանցելու նկատառումով՝ չափազանց գայթակղիչ էր պապականութեան համար, ուստի եւ նրա տեսակարար կշիռը շատ բարձր էր գնահատուում պապական քաղաքականութեան ոլորտում... Բայց Կիլիկեան հայկական թագաւորութիւնը ոչ միայն իր աշխարհագրական դիրքով ու տնտեսական յարաբերութիւններով Եւրոպայի ազդեցութեան ոլորտի մէջ էր ընդգրկուած, այլեւ հենց ներսում հաստատուած բազմաթիւ լատինական իշխանական տիրոյթների առկայութիւնը եւ նրանց հետ սերտ համագործակցութիւնը ընդհանուր թշնամու դէմ՝ ռազմական սուր բախումների ժամանակ, ինչպէս եւ ազգակցական կապերի հաստատումը նրանց հետ՝ խորը նստուածք էր տուել երկրի հասարակական կացութեամբ ու բարքերին՝ եւրոպականացման իմաստով»¹³։ Վերոյիշեալ գործօններին կարելի է աւելացնել եւս մէկը. պապականութեան ռազմավարական հաշուարկներով, Կիլիկիայի թագաւորների եւ յատկապէս կաթողիկոսների կաթողիկոսութեան ենթադրեալ ընդունումը, նկատի ունենալով նրանց հսկայական դերը, որպէս հայութեան բոլոր հատուածները կապող օղակ, անխուսափելիօրէն կը բերէր ամբողջ ազգի դաւանափոխութեանը։

Խաչերեանը, անդրադառնալով Կիլիկիայի իշխանութիւնների պապականութեան եւ առհասարակ Եւրոպայի հետ շփման շարժառիթներին՝ շեշտում է միմիայն ռազմա-քաղաքական օգնութիւն ստանալու յոյսը. «Հենց առաջին գրագրութիւններից... միանգամայն պարզ երեւում է, որ հայկական արքունիքի եւ կաթողիկոսութեան մերձեցումը պապական իշխանութեան հետ սոսկ քաղաքական ու ռազմական դաշինքի եւ աջակցութեան շարժառիթներով են թելադրուած եղել»¹⁴։ Սակայն, մեր կարծիքով, յետագայում, լատինամէտ տարրեր գնալով աւելի մեծ չափերով ներթափանցեցին արքունիք եւ կաթողիկոսարան (գրավառ օրինակներն են ինչպէս Հեթում Բ.ի գահակալումը, այնպէս էլ Լուսինեան Հարստութեան հաստատումը), որը յանգեցրեց ուժերի յարաբե-

րակցութեան խախտմանը եւ շատ դէպքերու մ, արեւմտամէտ ուղղութեան զօրացմանը, ինչն, իր հերթին, չէր կարող չանդրադառնալ երկրի արտաքին քաղաքանութեան վրայ:

Հարկ է նշել, որ լատիններէ հետ միանալու գաղափարի գերակայութիւն ստացած կողմնակիցները մերթընդմերթ առաջնորդու մ էին ոչ միայն եւ ոչ այնքան իրատեսական քաղաքական հաշուարկներով, որքան՝ գլխաւորապէս, զգացմունքներով, որոնք փոխակերպուեցին հաւատամքի, թէ՛ «Արեւմուտքը մեզ կ'օգնի»: Այլ կերպ անհնար է բացատրել Եւրոպային յղուած օգնութեան կոչերը՝ հաշուի առնելով Ը. խաչակրաց արշաւանքի ձախողումը (1270), պապականութեան Աւինիոնեան գերութիւնը (ինչը ուղղակիօրէն վկայում էր վերջինիս թուլացման մասին), հարիւրամեայ պատերազմը եւ ընդհանրապէս, արեւմտեան տէրութիւնների գրադուածութիւնը իրենց ներքին խնդիրներով: Իրերի այս դրութեան մասին կարող էին լաւ տեղեկացուած չլինել Պատմական Հայաստանում, սակայն միջազգային յարաբերութիւնների ոլորտ ընգրկուած Կիլիկիայի իշխանութիւններն անհնար է որ չիմանային:

Որոշ մասնագէտների կողմից առանձնակի ուշադրութեան չի արժանացել այն փաստը, որ միարարական շարժման ընթացքը ի տարբերութիւն Կիլիկիայի, այլ է եղել բուն Հայաստանում: Այդ ընթացքի եղանակները յստակ սահմանազատման կարիք են զգում: Այդպիսի հնարաւորութիւն մեզ ընձեռնում է ինչպէս վերոյիշեալ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական ընդհանուր գործընթացների դինամիկան, այնպէս էլ հիմնականում այն յայտնի փաստերը, որոնք անմիջականօրէն կապուած են միարարական շարժման պատմութեան հետ: Այսպէս, ուշ-ԺԳ. դարի պատմիչ Ստեփանոս Օրբէլեանն իր նամակներից մէկում (որը գրուած էր մինչեւ Սսի 1307ի աղմկայարոյց ժողովը)¹⁵, տիրող իրավիճակը բնութագրում է հետեւեալ կերպ. «Կիլիկիա բոլոր, որ տեղի էր մեր պարծանաց, այս իսկ վարակեալ կայ. եւ գլխաւոր քաղաք որ ի հռոմք ի սոյն մոլորեալ են, եւ հասաւ մինչ առ մեզ. զի քարոզի այս յայտնապէս ի թագաւորական քաղաքն ի Տփղիս, եւ ի հին տունն Բագրատունեացն յԱնի, եւ ի Շիրակ, նաեւ ի Թավրեժ շահաստան, եւ յայլ բազում տեղիս»¹⁶: Մենք կարծում ենք, որ Կիլիկիայի պարագայում հեղինակը խտացնում է գոյները, քանզի, դրանից մի քանի տարի անց, Սսի 1307ի ժողովից յետոյ, Հայր Միքայէլ Չամչեանի հաղորդած փաստերի համաձայն. «... անկաւ շշմջիւն մեծ ի վանորայս, եւ աղմուկ շփոթի յերիցունս եւ ի ժողովուրդս. ուստի եւ խափանումն եղեւ գործածութենէ այնոցիկ կանոնաց. եւ գրեթէ ոչ ուրեք, բայց եթէ ի Սիս ի թագաւորա-

նիստ քաղաքն պահեալ լինէին այնք. այլ անդ եւս քրթմնջիւն էր ի ժողովրդեան ի վերայ այսր»¹⁷: Համատեքստից պարզ երեւում է, որ եթէ ամբողջ Կիլիկիան «վարակուած» լինէր միաբարական գաղափարներով, ապա նրանց պաշտօնական ընդունումը եւ ամրացումը կը բերէր այդ ուղղութեան կողմնակիցների կատարեալ յաղթանակի: Մինչդեռ, իրականում, այդ որոշումները ոչ միայն չիրագործուեցին, այլ ընդհակառակը՝ առաջացրին բողոքների զանգուածային ելոյթներ: Հայ ձեռագրերի յիշատակարաններից մէկի հեղինակը այս կապակցութեամբ գրում է հետեւեալը. «ՉԾԸ (1309) թուականիս Հայոց գրեցաւ սուրբ Անտարանս յաշխարհիս Կիլիկեցուն, յուխտս Փոս կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին... ի թագաւորութեան Աւշնի, եւ ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեա, որք յայսմ ամի արսորեցին զմեզ ի կղզւոջն Կիպրոսի, վասն ոչ հնազանդելոյ աւանդիցն Քաղկեդոնի»¹⁸:

Չօգնեց նաեւ 1317ին Աղանայում գումարուած ժողովը, որին անդրադառնալով Մաղաքիա Արք. Օրմանեանը՝ գրում է. «Սակայն լատինամէտ կաթողիկոսին ու թագաւորին եւ տկարամիտ 17 եպիսկոպոսներուն կամքը շատ անգոր էր Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյն հազարամեայ անփոփոխ դաւանութիւնն այլայլել, եւ անոր հնաւանդ ծէսը խախտել: Ատանայի ժողովը քանի մը ժողովականներով հեղինակութիւն մը չէր կրնար ունենալ այդ մասին եւ չունեցաւ ալ»¹⁹: Իսկ Չամչեանն ուղղակիօրէն նշում է. «Արդ՝ թէպէտ եւ այսպէս կրկին ժողովով հաստատեցաւ... այլ ոչ ուրեք եղան ի գործ. բայց եթէ ի քանի մի եկեղեցիս Կիլիկիոյ եւ ի կաթողիկոսարանի - զի նաեւ նոքին իսկ եօթնետասն եպիսկոպոսունք՝ որք վերստին ընկալան զայս սահմանադրութիւնս, անկարանային պահել... Եւ Օշնի եւս տեսեալ թէ չիք հնար, դադարեցաւ ի ստիպելոյ զնոսա»²⁰: Չամչեանի հաղորդած տեղեկութիւններն առաւել հաւաստի են դառնում, հաշուի առնելով վերջինիս կողմից ցուցաբերած խիստ բացասական վերաբերմունքը հակամիարարական շարժման ղեկավարներից մէկի՝ Ստեփանոս Օրբէլեանի նկատմամբ: Այսպէս, 1288ի տակ շարադրուող դէպքերի համատեքստում նա նշում է. «Այլ քանզի սոյն այս Ստեփաննոս... սկսաւ մեծամտիլ եւ յոխորտանօք վարիլ, եւ անհաւան լինել այլոց, եւ զինիլ եւս ընդդէմ քաղկեդոնականաց»²¹: Մէկ այլ տեղում, կրկին անդրադառնալով Օրբէլեանի անձին, նա գրում է. «Եւ ապա սա ինքն Ստեփաննոս կամելով ամենուին ընդդէմ զինիլ նմա (ԺԳ.-ԺԴ. դ. մատենագիր Գրիգոր Անաւարզեցու դէմ - Վ.Ի.), եւ նոր իմն երկպառակութիւն արկանել, շարադրեաց գրքոյկ մի ի թուին՝ Հայոց ՉԾԱ ընդդէմ դաւանութենէ եւ աւանդութենէ

յունաց եւ կրկին յերիւրեալ առաւելութեամբ զկարգ բանից թղթոյն նախասացեալ վարդապետաց՝ յարեաց ի նոյն զրքոյկն. յորում ոչ այլ ինչ տեսակի ճշմարտասէր ընթերցողաց, բայց եթէ աղճատանք ստայօղ բանից, եւ սնոտի զրոյցք տգիտական ճառիցն»²²: Եւ այսպէս, վերը նշուած փաստերից յստակ երեւում է, որ Կիլիկիայում, պետական նեղ շրջանակներից բացի (իսկ իշխանական տոհմերից հաւանաբար ոչ-բոլորը), միարարական գաղափարները դրական արձագանգ չէին գտել հասարակական լայն զանգուածների կողմից:

Այլ էր պատկերը բուն Հայաստանում, որտեղ միարարութեան գաղափարը աւելի մեծ տարածում էր ստանում: Կարծում ենք, որ ձախողուած ժողովների փորձը, արեւելեան թեմերի յամառ դիմադրութիւնը եւ այլ գործօններ հողմացրիւ արեցին պապականութեան այն յոյսերը, որ եթէ Սսում հաստատուի միութեան մասին որոշում, ապա այն ինքնաբերաբար կ'ընդունուի ամբողջ ազգի կողմից: Այդ ամէնը ստիպեց Հռոմին իր հիմնական ուշադրութիւնը (միաժամանակ չղաղարելով Կիլիկիայի վրայ ճնշում գործադրել) սեւեռել Արեւելք եւ փորձել յաղթանակ տանել հենց այն վայրերում, որոնց հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդներն ի սկզբանէ ընդդիմադիր դիրք էին բռնել միարարութեան դէմ: Արեւելեան թեմերի այդ պայքարը գլխաւորել էր Սիւնիքը, որն իր իշխանների գործունէութեան եւ Գլաձորի Համալսարանի շնորհիւ, ունէր առաջնային նշանակութիւն: Հռոմի իշխանութեան ներքոյ միանալու հանդէպ իրենց բացասական վերաբերմունքը, արեւելեան թեմերի առաջնորդները - Օրբէլեանի եւ մանկավարժ Եսայի Նչեցու (1260/65-1338) գլխաւորութեամբ - արտայայտել էին դեռեւս կաթողիկոս Անաւարգեցու կենդանութեան օրօք (մինչեւ Սսի 1307ի ժողովի գումարումը), երբ ի պատասխան նրա նամակի գրել էին. «Եւ ընդէ՞ր է երկայնել մեզ զբանս: Հաւան ենք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել, եւ ոչ ընդ Հոռոմոց յերկինս ելանել»²³: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ արեւելցիների մտավախութիւններն այդ հարցում, ինչպէս ցոյց կը տայ դէպքերի յետագայ զարգացումը, լիովին արդարացուած էին: Բանն այն է, որ նոյնիսկ հենց կաթողիկոսների հետ միանալու հարցադրման փաստը, տուեալ անբարենպաստ պայմաններում, անխուսափելիօրէն կը յարուցէր (եւ յարուցեց) դաւանաբանական շղարշով քօղարկուած վնասակար քաղաքական ներքին վէճեր, որոնք մեծ հարուած կը հասցնէին աշխարհով մէկ սփռուած ազգի միութեանը: Իսկ ընդհանուր առմամբ, սպառնալիքի տակ էր դրւում հոգեւոր անվտանգութեան խնդիրը, որն ազգային անվտանգութեան բաղկացուցիչ եւ անբաժան մասն էր կազմում: Այսպէս, Օրբէլեա-

նը նշում էր. «Երկնչեաք եթէ յաւուրս մեր զարթնու չարն ի պատերազմ ընդ եկեղեցոյ. եւ յարուցանէ մրրիկ խռովութեան ի մէջ մեր. եւ ընթադրեալ կործանէ զսինլքոր մնացուած ազգիս»²⁴: Եւ եթէ Օրբէլեանը, Նչեցին եւ սիւնեցիք առհասարակ, չնայած իրենց սուր քննադատութեանը, չխզեցին իրենց կապերը Սսի Մայր Աթոռի հետ եւ չղիմեցին որոշակի անջատողական քայլերի, ապա Երուսաղէմի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը, չհանդուրժելով Կաթողիկոսարանի եւ Կիլիկիայի արքունիքի պահանջները՝ 1311ին առանձնացաւ եւ հիմնեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը²⁵:

Իրավիճակն Արեւելքում աւելի վատթարացաւ 1318ին՝ Բոլոնիացու յայտնուելուց յետոյ: Հայր Ղեւոնդ Ալիշանի տուեալներով, միարարութեան տարածման սկզբնական փուլում, նրանց ազդեցութեան ոլորտում էին յայտնուել 3 քաղաք եւ 30 գիւղ²⁶: Ունիթորական շարժման այս սկզբնական յաջողութեան գրաւականը եղել էին հասարակական-քաղաքական ընդհանուր անմխիթար կացութիւնը (պետականութեան բացակայութիւնը, քրիստոնեաների հանդէպ պարբերաբար յարուցուող հալածանքները, գոյքի եւ անձի ընդհանուր անպաշտպանուածութիւնը եւն.), պապականութեան քարոզչական մեքենայի եռանդուն աշխատանքը, որն ուղղակիօրէն խոստանում էր բոլոր չարիքներից փրկութիւն՝ դաւանափոխ լինելու դէպքում: Այսպէս, Բոլոնիացին, իր քարոզներից մէկում, անդրադառնալով հայութեան աղէտալի վիճակին, ուղղակիօրէն յայտարարում է. «Հաւատացեալ քրիստոնեայք, որ բաժանեցան ի միմեանց եւ ի գլխաւոր աթոռոյն Հռոմա, եւ ցրուեցան եւ անկան ի ծառայութիւն այլազգեաց... եւ զի յերկարեցան ի գերութիւնս այս, վասն այն յատաւ յոյս բազմաց: Ո՛վ ողորմելի քրիստոնեայք, մի՛ յուսահատիկ, զի յայս գերութենէս եւ ի մահուանէս կամիք յառնել. ոսկր առ ոսկր կամին յօղի միջնորդութեամբ ջլացն, քանզի քրիստոնեայք կամին միաբանիլ ընդ իրարս եւ ընդ սուրբ եկեղոյն Հռոմա՝ միջնորդութեամբ սուրբ սիրոյն... զի լինելոց են առնել մի արարողութիւն ի տօնս և ի պատարագս: Եւ յորժամ այսպիսի սիրով միաբանին ընդ իրար, յայնժամ զայ ի վերայ նոցա Հոգին Աստուծոյ»²⁷: Հարկաւոր է նշել, որ Կիլիկիայում, ինչքան էլ պետականութիւնը թոյլ լինէր եւ լատինամէտութեամբ ժամանակ առ ժամանակ վարակուած, այնուամենայնիւ, այն ոչ-բոլոր դէպքերում էր կուրօրէն ենթարկւում կաթողիկ քարոզարշաւին եւ որոշ դէպքերում ընդհակառակը՝ հանդիսանում էր զսպող ոյժ: Այս կապակցութեամբ կարելի է յիշատակել այն փաստը, որ երբ Սիմէոն-բէկի եւ Ներսէս Պաղոնի²⁸ յանդուգն գործունէութիւնը բերեց զանգուածա-

յին յուզումների, ապա «Ջալսալիսի անկարգութիւնս լուեալ եւ տեսեալ Յակոբ կաթողիկոս եւ Լեւոն արքայ, ոչ եւս կարացին հանդուրժել. այլ՝ թագաւորական իշխանութեամբ արձակեալ սպասաւորս... եւ եղին յարգելանս բանտի, եւ զայլս արքորեցին. եւ հազիւ ուրեմն այսալիսի բռնութեամբ կարացին զիջուցանել զաղմուկ նոցա»²⁹: Եւ դա էր պատճառներից մէկը, որ Կիլիկիայում միարարական կոչերը լայն արձագանգ չգտան, եւ նոյնիսկ, մշակոյթի գործիչ Սիմէոն Երեւանցու (1710-1780) հաղորդած փաստերի համաձայն, Սսի 1361ի եկեղեցական ժողովում բացարձակապէս մերժուեցին. «Երարձ զջուրն ի սուրբ խորհրդոյն եւ հերքեաց զախթարմայութիւնն՝ որ մուծեալ էր ի Հայս ի Կոստանդին հերձուածողէն եւ յՕշին թագաւորէն»³⁰:

Իսկ բուն Հայաստանի պարագայում գոյութիւն չունէր այդպիսի սանձահարող ոյժ, ինչը եւ արդէն նշուած գործօնների հետ մէկտեղ, յանգեցրեց միարարութեան համեմատաբար լայն տարածմանը: Այս հանգամանքն անչափ դժուարացնում էր գլաձորցիների պայքարը: Նչեցին, անդրադառնալով պետականութեան սանձահարող ոյժի բացակայութեան հարցին եւ կաթողիկոսարանի թոյլ եւ տատանուող դիրքորոշմանը, գրում է. «Եւ ասեմ քաջ դիտողացդ, զի յանիշխանութեան ազգիս, նաեւ ի փառասէր սնապարծ յանդուգն հակառակող բարուց մարդոց եմուտ անկարգութիւն յեկեղեցիս մեր: Եւ դիւրին էր մեզ ուղղել եթէ գոյր մեր թագաւոր Աստուածասէր իրաւադատ կամ քահանայապետ վրէժխնդիր արինաց եւ կարգաց»³¹: Այդ ամէնը Հայաստանի տարածքում ծաւալուած պայքարին հաղորդում էր առաւել սուր բնոյթ: Աւելացնենք, այս կապակցութեամբ եւս մէկ փաստարկ. արդէն այն հանգամանքը, որ պահպանուած աղբիւրները չեն յիշատակում միարարական շարժման կիլիկիացի երեւելի քարոզիչների անունները, այլ միայն նշում են բուն Հայաստանում գործունէութիւն ծաւալած ԺԳ. դարի մատենագիր Յովհաննէս Քոնեցու, Սիմէոն-բեկի, Պաղոնի եւ այլոց անունները, որոնք հակառակը՝ արդէն Հայաստանից են գալիս «լուսաւորելու» Կիլիկիայի հայութիւնը եւ «մոլորութեան խաւարը» ցրելու նրանց միջից, վկայում է հենց Պատմական Հայաստանի տարածքում պայքարի ուժգնութեան եւ չափազանց լարման մասին:

Սակայն գլաձորցիք, սերտ գործակցելով Սիւնիքի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնների հետ, կարողանում են հակառակորդից խլել նախաձեռնութիւնը, եւ անցնելով հակայարձակման սկսում են հզօր հարուածներ հասցնել միարարական շարժմանը: Այդ մասին է վկայում հենց շարժման առաջնորդի՝ Բոլոնիացու հետեւեալ խոստովանութիւնը.

«Այլ ի քարոզութենէն Քրիստոսի եւ գլխաւոր առաքելոյն Պետրոսի՝ բանադրանօք լինի մարդն այն, որ տայ գթարոգգիրս այս ի հակառակաց եւ կամ ի ձեռն սուտ միաբանաց: Զի փորձեցաք բազում անգամ, որ հակառակ մարդիկ զմեր բանս իւրեանց զէն արարին, եւ սրով մեր պատերազմեցան ընդ մեզ եւ ընդ ճշմարտութեանն: Վասն այն ընդ անիծիւք է մարդն այն, որ տայ զգիրքս ի հակառակ մարդ ի նեղակարծիք միաբան»³²:

Պայքարը չղաղարեց եւ Նչեցու մահից յետոյ (1338): Հետազօտողներն առհասարակ շատ բարձր են գնահատում վերջինիս դերն միարարական շարժման խափանման գործում: Այսպէս, Գարեգին կաթողիկոս Յովսէփեանցը (1867-1952) գրում է. «Չլինէր Նչեցին իւր դպրոցով, շատ ատելի մեծ չափով վտանգուած կը լինէր Հայոց եկեղեցու անկախութեան խնդիրը»³³: Այս պայքարով Նչեցին եւ իր կողմից դաստիարակուած սերունդը, որի ամենավառ ներկայացուցիչներն էին՝ մատենագիրներ Յովհան Որոտնեցին (1315-1388) եւ Գրիգոր Տաթեւացին (1346-1410), կարողացան լուծել նաեւ ազգի ինքնութիւնը պահպանելու խնդիրը: Այս կապակցութեամբ, Գ. Գրիգորեանը արդարացիօրէն նշում է. «Յայտնի է, որ միջնադարում ազգային հիմնական յատկանիշ են դիտուել նաեւ կրօնական-ծիսական առանձնայատկութիւնները. կրօնականը յայտնի չափով միջոց է եղել ազգային մտածողութեան ուրոյնութիւնը դրսեւորելու համար: Պատահական չէ, որ կաթողիկ աշխարհը եւ ուղղափառ Բիւզանդիան, հայերին ազգայնապէս դիմագրկելու ու իրենց ազդեցութեան ոլորտն առնելու համար, ամէն կերպ ձգտում էին նրանց դաւանափոխ անել եւ վերացնել Հայ եկեղեցու ատոկեֆալ իրաւունքը»³⁴: Եւ շատ հաւանական է, որ եթէ հակամիարարական շարժման առաջնորդները չկարողանային միարարական գաղափարների տարածման դէմն առնել, ապա այսօր, հայութիւնը որպէս այդպիսին գոյութիւն չէր ունենայ, կամ էլ, լաւագոյն դէպքում, աշխարհագրական տարանջատումից զատ բաժանուած կը լինէր նաեւ կրօնական յատկանիշով:

Աւարտելով, կ'ուզէինք, որպէս լրացուցիչ փաստարկ, մէջբերել Օրմանեանի կարծիքը. «Հայերը դատափետողներուն կարգին խումբ մըն ալ կայ, որ Հայերուն անկման պատճառ կը նկատէ իրենց ազգային եկեղեցւոյն ամուր կապուած մնալին. իբր քէ իրենց վիճակնին շատ ատելի բարոքուած պիտի ըլլար, եթէ Հռոմէադաւան կաթողիկոսիւնը ընդունած ըլլային, որով Եւրոպիոյ կաթողիկ տէրութեանց պաշտպանութիւնը կը վայելէին: Բայց այդ ենթադրութեան ալ անհիմն՝ եւ մե-

դադրանքին անհրաւ րլլալը հաստատելու համար, բաւական է միտք բերել Կիլիկիոյ Հայ թագաւորութեան վերջին եղելութիւնները, եւ այդ եղելութեանց հետեւանք եղող սպառնալուծ կործանումը: Այն եղելութիւնները յայտնապէս կը հաստատեն, թէ կործանումը ուղղակի հետեւանք եղաւ Լատիններու հետ հաստատուած մերձաւորութեանց»³⁵:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Ուղեգրութիւններ, հտր. Ա., ԺԳ.-ԺԶ. Դարեր (1253-1582), կազմ. Յովհաննէս Յակոբեան, Երեւան, «Պետհրատ», 1932, էջ 113:
- ² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կարապետ Մելիք-Օհանջանեանի, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1961, էջ 240:
- ³ Էդուարդ Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացիին Եւ Նրա Խրատական Արձակը, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1977, էջ 206:
- ⁴ Հասան-Ջալալը (մհ. 1260) սեռում էր Առանշահիկների տոհմից: 1214ին ժառանգել էր Ներքին Խաչենի իշխանութիւնը եւ դարձել Արցախի ու յարակից հայկական շրջանների իշխանների գահերէցը: 1260ին միացել էր մոնղոլների դէմ Վրաստանում բռնկուած ապստամբութեանը, որի ճնշումից յետոյ սպանուեց:
Սադուն Բ. Արծրունին (մհ. 1282) սեռում էր Մահկանաբերդի Արծրունիների տոհմից: Եղել է Աւագ Ջաքարեանի դուստր Խոշակի կալուածների կառավարիչը: Օգտագործելով իշխանութեան վերնախաւի հետ իր ունեցած կապերը՝ բարձր դիրքի է հասել վրաց Դեմետր թագաւորի արքունիքում եւ 1271ից ճանաչուել աթաբեկ (վրաց գահի խնամակար) եւ ամիրսպասալար (զօրքերի սպարապետ): Ամուսնացել է Դեմետրի քոյր Թամարի հետ եւ ստացել Դմանիս քաղաքը՝ շրջակայքով: Քաղաքական ազդեցութիւնը ընդլայնելու նպատակով պայքարել է Օրբէլեանների դէմ:
- ⁵ Բասդաղ նշանակում է հարկեր գանձող: Մոնղոլական տիրապետութեան տարիներին բասդաղը եղել է բարձր պետական պաշտօնեայ:
- ⁶ Սմբատ Օրբէլեանը (մհ. 1273) պայքարել է Հիւսիս-արեւելեան Հայաստանում (գլխաւորապէս՝ Սիւնիքում) Օրբէլեանների քաղաքական առաջնութեան հաստատման համար: Ազատուելով Ջաքարեանների եւ վրաց թագաւորների գերիշխանութիւնից, նա ձեռք էր բերել ներքին ինքնավարութիւն:
- ⁷ Ջաղաթեանների տիրոջթի մէջ մտնում էին Միջին Ասիայի երկրների զգալի մասը: Այդ տիրոջթը գոյատեւեց մինչեւ ԺԴ դարի կէսը: Չօբանեաններն ու Ջելաիրեաններն սկսել են պայքարել միմեանց դէմ իշխանութեան թուլացման ժամանակ (ԺԴ դարի 40ականներ): Սկզբնական յաջողութիւնը Չօբանեանների կողմն էր, որոնց յաջողուեց Ջելաիրեաններին մղել Հիւսիսային Իրաք եւ սեփական իշխանութեան տակ վերամիաւորել նախկին իշխանութեան կազմում գտնուող շատ երկրներ, այդ թւում՝ Հիւսիսային Իրանը, Ասորպատականը եւ գրեթէ ամբողջ Հայաստանը: Սակայն յետագայում՝ 1358ին, Ջելաիրեաններին յաջողուեց պարտութեան մատնել Չօբանեաններին եւ տիրանալ վերոյիշեալ տարածքներին:
- ⁸ Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն, աշխատասիրութեամբ Լեւոն Խաչիկեանի, Երեւան, 1999, «Մագաղաթ», էջ 42-43:

- ⁹ G. Mikayelyan, *Istoriya Kilikiskogo Armyanskogo Gosudarstva* (Կիլիկեան Հայկական Պետութեան պատմութիւն), Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1952, էջ 402-403:
- ¹⁰ Սանուտոն ազնուատոհմ վենետիկցի է, որ թողել է չափազանց կարեւոր սկզբնաղբիւր Հանդիսացող *Ռաչակրաց Գաղտնի Գիրք* աշխատութիւնը:
- ¹¹ Կլոդ Մութաֆեան, *Կիլիկիան Կայսրութիւնների Ռաշմերուկում*, Երեւան, «Նաիրի», 2001, էջ 463:
- ¹² Կաթողիկ քարոզիչների գործունէութեան եւ առհասարակ, միարարութեան տարածման վերաբերեալ, հիմնական սկզբնաղբիւրներից է Կղեմէս Գալանոսի *Միաբանութիւնն Մեծի Եկեղեցւոյ Հռոմայ Ընդ Հայոց Եկեղեցի* աշխատութիւնը (1648, Հռոմ): Ճիշտ է, այն միակողմանի է եւ չատ դէպքերում փաստերն աղաւաղող, սակայն կարեւոր աղբիւր է: Ունիթորներից ստեղծուած գրականութեան մասին, տե՛ս, օրինակ՝ Վան դէն Ուդենուիյնի աշխատութիւնները Հայր Յակոբ Ոսկեանի թարգմանութեամբ (*Բազմալէզ*, 1922), նաեւ՝ Սէն Արեւշատեան, *Միջնադարեան Հայաստանի Փիլիսոփայական Դպրոցների Պատմութեան Շուրջ* (XIV դ.), Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1980:
- ¹³ Լեւոն Ռաչերեան, *Շաալի Նչեցին Եւ Գլաժորի Համալսարանը* (1280-1340), Լոս-Անջելէս, 1988, էջ 328:
- ¹⁴ Նոյն:
- ¹⁵ Այս մասին տես՝ Գաղիկ Յարութիւնեան, «Քրիստոնէական Եկեղեցու Համընդհանրութեան Գաղափարը Սսի 1307ի Ժողովում», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, հտր. ԺԴ, Պէյրութ 1994, էջ 147-168:
- ¹⁶ Ռաչերեան, էջ 342:
- ¹⁷ Միքայէլ Չամչեան, *Հայոց Պատմութիւն*, հտր. Գ., Երեւան, 1984, էջ 311:
- ¹⁸ ԺԴ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, աշխատասիրութեամբ Լեւոն Ռաչիկեանի, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1950, էջ 62-63, նաեւ՝ Սամուէլ Անեցի, *Հաւաքունք Ի Գրոց Պատմագրաց, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի տպարան*, 1893, էջ 156:
- ¹⁹ Մաղաքիա Օրմանեան, *Ազգապատում*, մասն Բ., Կ. Պոլիս, Հրատարակչութիւն Վ. եւ Հ. Ներսէսեան, 1914, էջ 1822-1823:
- ²⁰ Չամչեան, էջ 314:
- ²¹ Նոյն, էջ 284:
- ²² Նոյն, էջ 292:
- ²³ Ստեփանոս Օրբէլեան, *Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, Տպ. Ն. Աղանեանցի*, 1910, էջ 459:
- ²⁴ Նոյն, էջ 449:
- ²⁵ Յարութիւն Տէր-Ղազարեան, *Հայկական Կիլիկիա-Տեղագրութիւն, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ*, 1966, էջ 286:
- ²⁶ Ղեւոնդ Ալիշան, *Սիսական, Վենետիկ, Ս. Ղազար*, 1893, էջ 386:
- ²⁷ Յովհաննէս Քոնեցի, *Թաղաքս Քերականին*, աշխատասիրութեամբ Լեւոն Ռաչիկեանի, Ս. Աւագեանի, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1977, էջ 28-29:
- ²⁸ Ներսէս Պաղոն (Պալիենց, մհ. 1363) միարարութեան քարոզիչ: Հրաժարուելով Հայ Առաքելական Եկեղեցուց, 1336ին մեկնել է Կիլիկիա, որտեղ, Կարինի Սիմէոն-բէկ եպիս-

- կոպոսի եւ այլ համախոհների հետ քարոզել է միարարութեան գաղափարները: 1338ին Բենեդիկտոս ԺԲ. պապից ստացել է Մանազկերտի արքեպիսկոպոսի աստիճան:
- ²⁹ Չամչեան, էջ 331:
- ³⁰ Սիմէոն Երեւանեցի, *Ջամրու Գիրք, Որ Կոչի Յիշատակարան Արժանացուցակ, Վաղարշապատ*, 1873, էջ 17:
- ³¹ *Խաչերեան*, էջ 340:
- ³² Նոյն, էջ 352:
- ³³ Գարեգին Յովսէփեան, *Քաղաքական Կամ Պաշտոնական Հայոց Պատմութեան Մէջ*, մասն Բ., Երուսաղէմ, Տպարան Սր. Յակոբեանց, 1942, էջ 267:
- ³⁴ Գրիգոր Գրիգորեան, *Երեւանի Որոտնեցու Փրկիստփայական Ուսմունքը*, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1980, էջ 221:
- ³⁵ Մ. Օրմանեան, «Հայոց Եկեղեցւոյ Ազգային Նկարագիրը եւ Ազդեցութիւնը», *Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 2000, էջ 16:

THE TRACK OF CHURCH UNITY IN
THE CONTEXT OF XIV-XV C. SOCIO-POLITICAL PROCESSES
(summary)

VLADIMIR IVANOV

The author maintains that the loss of statehood or its weakening is always accompanied by socio-political, economic and other shocks, which in turn make the spiritual sphere vulnerable, and directly lead to complicated issues of the security of the spiritual space of the nation.

In this article Ivanov depicts the sociopolitical conditions prevailing in Armenia proper and Cilicia during the late period of the crusaders. The area witnessed the Mongol invasions and the eventual establishment of the Mongol Ilkhanate, the fall of the Zaccarids in Armenia proper and the attacks of the Egyptian sultanate on Cilicia.

Against the backdrop of this political turmoil, Ivanov narrates the attempts made by the Papal See at converting the Armenians to Catholicism, and bringing the Armenian Apostolic church under the leadership of Rome.

The author highlights the diverse factors and actors that supported the unification attempts. However, most of the clerics of Armenia proper opposed the attempt. Likewise, most of the ordinary Armenian inhabitants of Cilicia opposed it. Their actions destabilized the kingdom of Cilicia and forced king Oshin and Catholicos Constantine in the council of Sis in 1361 to call off the process of unification.

1912Ի ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ

ԵՂԻԿ ՃԷՐԷՃԵԱՆ
yeghjerj@dm.net.lb

ՆԱԽԱԲԱՆ

1912ի Օսմանեան երեսփոխանական ընտրութիւններուն հայութեան մասնակցութիւնը, այդ ժամանակաշրջանին նուիրուած պատմագիրքերուն մէջ անհրաժեշտ չափով ուսումնասիրուած չէ: Այդ մասին չկան նաեւ առանձին ուսումնասիրութիւններ: Մինչդեռ, հարցին քննութիւնը կարեւոր է երիտթուրք-հայ յարաբերութիւնները եւ հայ ազգային-հասարակական կեանքին մէջ գործող կուսակցութիւններուն ու հոսանքներուն միջեւ առկայ տարակարծութիւնները աւելի լաւ ըմբռնելու տեսակէտէն:

Այլապէս ալ, օսմանեան երեսփոխանական ընտրութիւններուն հայութեան մասնակցութիւնը, Երեսփոխանական Ժողովէն ներս հայ երեսփոխաններուն գործունէութիւնը, ինչպէս նաեւ 1906-1917ի Ռուսիոյ իրերայաջորդ չորս պետական դումաներու հայազգի պատգամաւորներուն գործունէութեան աւելի խորունկ ուսումնասիրութիւնը կարեւոր կը նկատենք հայ հասարակական միտքի խորհրդարանական մտածելակերպի (փարլամենթարիզմ) սկզբնաւորումն ու զարգացումը աւելի յստակօրէն մեկնաբանելու իմաստով: Որովհետեւ, մեր կարծիքով, ճիշդ չէ հայ հասարակական մտածողութեան մէջ խորհրդարանական մտածելակերպի սկիզբը նկատել Հայաստանի Ա. Հանրապետութեան Խորհրդարանը: Այն անպայմանօրէն պէտք է կապել Օսմանեան եւ Յարական Կայսրութիւններու խորհրդարաններուն հետ. կայսրութիւններ՝ որոնց միջեւ բաժնուած կը մնար Հայաստանը, որոնց մէջ կ'ապրէր հայութեան մեծագոյն հատուածը եւ որոնք համապատասխանաբար կը նկատուէին հոն ապրող հայութեան «հայրենիքը»:

1908ին, յեղափոխութեան միջոցով Օսմանեան Կայսրութեան իշխանութեան ղեկը ընդհանուր առմամբ իր ձեռքերուն մէջ առած (իսկ 1913-1918ին իր ամբողջատիրութիւնը հաստատած) Իթթիհատ Վէ Թերաֆըր (միութիւն եւ յառաջդիմութիւն) կուսակցութիւնը կը խոստանար երկիրը ղեկավարել ժողովրդավարական սկզբունքներով, այսինքն՝ սահմանադրութեամբ եւ խորհրդարանով: 1908ին, Սուլթան Ապտուլ Համիտ, տեղի տալով Իթթիհատի ճնշումներուն, արդէն վերահաստատած էր